

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական)  
համալսարանի

գիտական գծով պրոռեկտոր,  
փ.գ.դ., պրոֆեսոր

Պ.Ս. Ավետիսյան

«11» հոկտեմբեր 2024թ.



### ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ԺԲ.00.03-«Մասնավոր իրավունք-քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ Կարեն Արտակի Մելիքսեթյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված՝ «Վենչուրային բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմինների համակարգը և պատասխանատվության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Կարեն Արտակի Մելիքսեթյանի կողմից պաշտպանության ներկայացվող ատենախոսությունը նվիրված է իրավագիտության մեջ բավականին հետաքրքիր և կարևոր նշանակություն ունեցող թեմայի՝ վենչուրային ներդրողների ներգրավմամբ բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմինների համակարգի և պատասխանատվության իրավական կարգավորման հարցերին:

Հայաստանի Հանրապետության տնտեսության բնագավառում տնտեսավարող սուբյեկտները հանդես են գալիս տարբեր կազմակերպա-իրավական ձև ունեցող իրավաբանական անձինք հիմնադրելու և դրանք կառավարելու միջոցով:

Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության մեջ բացակայում են «կորպորացիա» կամ «կորպորատիվ տիպի իրավաբանական անձ» եզրույթները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ և 51-րդ հոդվածներով ներկայացվում են իրավաբանական անձի հասկացությունը և տեսակները՝ դասակարգման համար հիմք ընդունելով դրանց կողմից շահույթ ստանալու նպատակ հետապնդելը կամ չհետապնդելը:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխում ամրագրված են նորմեր, որոնք վերաբերում են կորպորատիվ իրավահարաբերություններից բխող վեճերով գործերի վարույթին՝ բացահայտելով կորպորատիվ վեճերի շրջանակը և սահմանելով դրանց լուծման դատավարական կարգը:

Տեսաբանների կողմից կատարված վերլուծությունների արդյունքում՝ կորպորացիա եզրույթը կարելի է բնութագրել որպես ցանկացած կազմակերպչաիրավական ձևի իրավաբանական անձ՝ այդ թվում նաև բաժնետիրական ընկերություն:

Հայաստանի Հանրապետությունում բաժնետիրական ընկերության օրենսդրական ամրագրման փուլն սկսվեց 90-ական թվականներին՝ «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» օրենքի ընդունմամբ: Նման ընկերության առաջացման անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ տնտեսության բնականոն զարգացման համար հասարակությունը կարիք ուներ այնպիսի կազմակերպչաիրավական ձևի, որը կապահովեր անձի և կազմակերպության միջև առավել սերտ հարաբերությունների առկայություն և ներքին պարտավորական հարաբերությունների ճկունություն:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ վերջին տասնամյակում այս ինստիտուտի կատարելագործմանն ուղղված որոշ փոփոխություններ են կատարվել, որոնք իրավահարաբերությունների կարգավորման հետ կապված մի շարք հարցերում բավականին արդյունավետ լուծումներ են առաջարկում, սակայն դրանք զերծ չեն թերություններից, բացթողումներից և հակասություններից:

Միաժամանակ տնտեսության հետագա զարգացումը կազմակերպչաիրավական այս ձևի իրավական կարգավորմանն ուղղված օրենսդրության կատարելագործման անհրաժեշտություն է առաջացնում:

Այսպիսով, ողջունելի է ատենախոսի կողմից նման թեմայի ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելը, քանի որ ՀՀ իրավունքի գիտության մեջ առաջին անգամ ատենախոսության մակարդակով իրականացվել է վենչուրային բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմինների իրավական կարգավորման հետ կապված խնդիրների մանրամասն հետազոտություն և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում:

Ատենախոսն իր առջև նպատակ է դրել համակարգված և հիմնավոր վերլուծության ենթարկել վենչուրային բաժնետիրական ընկերությունների գործունեության հետ կապված տեսական և պրակտիկ հարցերը, վենչուրային բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմինների համակարգը, կորպորատիվ իրավահարաբերությունների զարգացման միտումներն ու օրինաչափությունները, ինչպես նաև այդ մարմինների պատասխանատվության առանձնահատկություններն ու դրանց կարգավորմանն ուղղված

նոր դրույթների ներդրման նպատակահարմարությունը: Ուսումնասիրության արդյունքում  
ատենախոսը կարողացել է հասնել իր առջև դրված վերոհիշյալ նպատակներին:

Ատենախոսության ակնառու արժանիքներն են՝

1. ատենախոսությունն ունի բավականին հարուստ տեսական հիմք:  
Ատենախոսն իր աշխատանքում հետազոտել է ինչպես հայրենական, այնպես էլ  
օտարերկրյա հեղինակների գիտական աշխատություններ և հոդվածներ, ինչպես  
նաև ՀՀ դատական պրակտիկայի նյութեր,

2. ուսումնասիրություններ կատարելիս հեղինակն անդրադարձել է նաև  
այլ կազմակերպարավական ձևերի՝ մասնավորապես սահմանափակ  
պատասխանատվությամբ ընկերությունների կառավարման մարմինների  
համակարգին վերաբերող մի շարք տեսական հարցերի քննությանը,

3. քննարկվող հարցերը վերլուծելիս ատենախոսն անդրադարձել է նաև  
կորպորատիվ տիպի ընկերությունների հիմնադիրների և մասնակիցների  
իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության սոցիալ-  
տնտեսական ասպեկտներին:

Ուշագրավ են հեղինակի կողմից արված մի շարք դիտողություններ և  
առաջարկություններ, որոնք վերաբերում են ՀՀ քաղաքացիական օրենսդրության  
կատարելագործմանը: Պետք է նշել դրանցից մի քանիսը:

Այսպես, տեղին է հեղինակի կողմից կատարված այն դիտողությունը, որ  
«խնդրահարույց է ընկերության խորհրդում գործադիր մարմնի ներկայացուցիչներ  
ընդգրկելու օրենսդրական հնարավորությունը»: Համաձայն ենք հեղինակի այն  
գնահատման հետ, որ պետք է հստակ տարանջատել բաժնետիրական ընկերության  
գործադիր մարմնի և խորհրդի լիազորությունները՝ արգելելով գործադիր մարմնի  
անդամներին ընդգրկել ընկերության խորհրդի կազմում:

Ուշադրության արժանի է հեղինակի կողմից ընկերության կոլեգիալ և/կամ  
միանձնյա գործադիր մարմնի ձևավորման հարցի քննարկումը: Ատենախոսը տեղին է  
նկատում, որ հարկ է վերացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ  
մասում և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածում առկա  
անհամապատասխանությունը, ինչպես նաև անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ  
քաղաքացիական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին և «Բաժնետիրական ընկերությունների  
մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասերը՝ գործնականում հնարավոր խնդիրներից  
ձեռնպահ մնալու նպատակով:

Ատենախոսը տեղին է նկատում, որ Հայաստանի Հանրապետությունում  
վեճարարային կապիտալի ներդրումների ներգրավման վրա բացասական ազդեցություն ունի  
ստարտափային ընկերությունների ստեղծման, դրանց կորպորատիվ կառավարման և

պատասխանատվության հետ կապված հարաբերությունների ոչ լիարժեք իրավակարգավորումները: Ուստի, հեղինակի այն առաջարկը, որ պետք է առանձնացնել վենչուրային բաժնետիրական ընկերությունը որպես բաժնետիրական ընկերության հատուկ տեսակ, լիովին ընդունելի է ժամանակակից տնտեսական հարաբերությունների պայմաններում:

Համակարծիք ենք հեղինակի այն դիրքորոշման հետ, որ Հայաստանի Հանրապետությունում իրավակարգավորման շրջանակներից դուրս են մնացել բաժնետիրական համաձայնագրին զուգահեռ կիրառվող ներդրման համաձայնագրին վերաբերող հարաբերությունները, ուստի, հաշվի առնելով վենչուրային բաժնետիրական ընկերությունների բաժնետերերի շրջանակը և նման ընկերությունների կապիտալի ձևավորման առանձնահատկությունները, անհրաժեշտ է սահմանել ներդրման համաձայնագրին վերաբերող օրենսդրական դրույթներ:

Չթերագնահատելով կատարված հետազոտության գիտական արժեքը, այնուամենայնիվ, ատենախոսության վերաբերյալ կարելի է որոշ դիտողություններ անել: Մասնավորապես՝

1. Գտնում ենք, որ ատենախոսության 1-ին գլխի 1.2 պարագրաֆում հեղինակը բավականին մանրամասն է անդրադարձել արտոնյալ և սովորական բաժնետոմսերի առանձնահատկություններին, հեռանալով քննարկվող խնդրի բուն էությունից: Ցանկալի կլիներ նշված պարագրաֆում հեղինակի կողմից ավելի մանրամասն ներկայացվեին վենչուրային բաժնետիրական ընկերության բաժնետերերի ժողովի լիազորությունների առանձնահատկությունները:

2. Կարծում ենք, որ ատենախոսության 1-ին գլխի 1.2 պարագրաֆի եզրափակիչ մասում տրված սահմանումը՝ վենչուրային բաժնետիրական ընկերության խորհրդի վերաբերյալ, լրամշակման կարիք ունի: Մասնավորապես, «ձևավորվում է/կարող է ձևավորվել», «համաձայնությամբ/հաստատմամբ», «իրականացնում է /կարող է իրականացնել/» ձևակերպումները պետք է հստակեցվեն հեղինակի կողմից՝ բացառելով հակասությունները:

3. Ատենախոսության 2-րդ գլխի 2.2 պարագրաֆը վերնագրված է «Վենչուրային բաժնետիրական ընկերությունը հսկող անձանց պատասխանատվության առանձնահատկությունները», սակայն նշված պարագրաֆում հեղինակի կողմից առավելապես ներկայացվել են հիմնական/հսկող/ և դուստր /հսկվող/ ընկերությունների հասկացությունները և այդ ընկերությունների միջև առկա հարաբերությունների առանձնահատկությունները: Մինչդեռ կարծում ենք, նշված պարագրաֆում հեղինակը հիմնականում պետք է ուսումնասիրեր հսկող անձանց պատասխանատվության առանձնահատկությունները:

4. Մեր կարծիքով ատենախոսությունն ավելի կշահեր, եթե հեղինակն իր աշխատանքում անդրադառնար վենչուրային բաժնետիրական ընկերության կառավարման մարմինների միջև առկա կորպորատիվ հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրներին:

5. Ցանկալի կլիներ նաև, որպեսզի հեղինակն ավելի մանրամասն ներկայացներ վենչուրային բաժնետիրական ընկերության կառավարման մարմինների իրավասությունները և սահմաններ դրանց շրջանակը:

Այնուամենայնիվ, նշված դիտողություններն ու առաջարկությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը: Կարեն Արտակի Մելիքսեթյանի «Վենչուրային բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմինների համակարգը և պատասխանատվության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնել, որ ատենախոսը ցուցաբերել է հիմնահարցի լավ իմացություն և ներկայացրել է գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրված և գործնական նշանակություն ունեցող աշխատանք:

ԲՄԿ ՊՈԻՀ Ռուս-Հայկական (Սլավոնական)

համալսարանի

Իրավունքի ինստիտուտի տնօրենի ժ.պ.

Վ.Լ. Հովհաննիսյան

ԲՄԿ ՊՈԻՀ Ռուս-Հայկական (Սլավոնական)

համալսարանի գիտքարտուղար, Բ.Գ.Թ.



Ռ.Ս. Կասարարովա